կարեաց մեր՝ զբարի։ Արդ զիա՞րդ վստահացեալ վասն մեր նա զչար խօսի. ըստ գրեցելոյն ձեր՝ նենգաւոր լեզուին զի՛նչ եւս յաւելցի, բայց թէ ըստ վկայից երկուց եւ երից հաստատի։ Նա ըստ ապիրատութեան իւրում զչարն ընկալցի. դուք զչար մի՛ հատուցանէք փոխանակ չարի, այլ բարեաւ յաղթեցէք չարի, վասն որոյ առաջի ձեր միշտ նա գլխիկոր լիցի, որպէս հրամանն է մեր Նպատակին Յիսուսի։ Ո՞չ ապաքէն հակառակքն նախանձու հակառակէին Քրիստոսի՝ Դու զանձն քո Աստուած առնես որ մարդոյ ես որդի. ո՞չ երբեմն գահավիժել եւ քարկոծել փութացան ազգն ժպրհի։ Ո՞չ կարացիք յիշել զբանն Յիսուսի որ ասէրն. Որդի Մարդոյ երթայ որպէս եւ գրեալ է վասն նորա ի տառս տեսանողացն յայտնի. բայց վա՜յ այնմիկ յոյր ձեռն Որդի Մարդոյ մատնեսցի։ Կամ՝ երթայք ասացէք աղուիսուն Հերովդէի՝ Այսօր եւ վաղիւն բժշկութիւնս կատարեմ եւ վաղիւն յերիր աւուր կատարիմ։ Իսկ ոչ գտան նմա բարեկամք որք խրատէին զնա ծածուկ եւ յայտնի, թէ դորա մարտն ընդ ձեզ է, ահա՛ գլուխ իմ յատեան դիցի. բայց թէ ի ծերութեան ցնդեալ է որ մեզ չար կամի, կամ թէ չարակամք դորա թիւր ամբաստանեալ՝ ի նոցունց դրդի, կամ թէ արդ փոշմանեալ եւ Մեղա՛յ ասասցէ՝ Տէր մեր ընկալցի, եւ դուք թողջիք դմա՝ զոր Տէրն կամի։ Իսկ թէ կամաւ չարախօսեցաւ եւ միշտ հակառակի՝ նորա ընդդիմութիւն առ Սուրբ Աստուածածինն վերաբերի, զի դուք նորա էք սպասաւոր. ի նա յանձնեցէք իբր զկատղած շուն զոր վերյիշեցի, եւ դուք ասացէք զԱմէնողորմ Տէր ողորմեան՝ ատելեացդ զթողութիւն եւ որ զկնի։ Յետ այսորիկ եթէ զղջացեալ ոչ զգաստասցի՝ կալջիք զդա որպէս զհեթանոս, որպէս ֆէթվայն է Յիսուսի։

(Ձեռ. Թիւ 1059, բղ. 69բ)